

**Б. А. Тураевъ, Помятники Эфиопской Письменности, Изъ Армяно—Абисенскихъ сношевий, С. Петерб. 1912, ст. 13.**  
**Ա. Բ. Տուրաևի, Եթովպական գրականութեան յիշաւակարաններ Հայերի եւ Հաբէսների յարաքերութեանց մասին. Ս. Պետերբուրգ. 1912 էջ 13.**

Տուրաևը Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր է. հմուտ և հեղինակաւոր անձ եթովպական գրականութեան մէջ և քաջածանօթ մանաւանդ հին եկեղեցական ծիսական մասնաճիւղին: Երկու տարի առաջ իւր Կովկասում կատարած ճանապարհորդութեան լնժմացքում այցելեց նաև Եջմիածնի վանքը: Մատենագարանի այցելութեան ժամանակ հարցրեց. պահւում են այդտեղ արդեօք եթովպակերէն և սլաւոներէն ձեռագրեր: Ես բացարկեցի, որ ամբողջական ձեռագրեր չկան, որ առհասարակ ինձ յայտնի հայկական ձեռագրական խոշոր ժողովածուներում. չնշին բացառութեամբ, չկան օտարլեզուեան ձեռագրեր: Բայց նշաններից երեսում է որ Հայաստանում առերևոյթ միշտ գտնուել են ազդպիսի գրքեր և դրա հաստատուն ապացոյցն ունենք ձեռագրերի մագաղաթեայ պահպանակներում: Հայերէն բոլոր ժողովածուներում գտնուում են բազմաթիւ ձեռագրեր յունարէն, լատիներէն, երրայեցերէն, ասորերէն, սլաւոներէն, եթովպերէն և վրացերէն մագաղաթեայ պահպանակներով, բայց ոչ մի հատ պարսկերէն կամ արարերէն: Բացատրութիւնը պարզ է. յիշեալ լեզուներին ծանօթ վարդապետներ կամ անհատներ ըստ յարմարութեան անձնական գործածութեան համար ունեցել են այդ օտարլեզուեան ձեռագրերը, երբ այդ օրինակները տէրերից անցել են ուրիշների ձեռքը, որոնք չեն հասկացել լեզուն, հանդիսան խզնով մագաղաթեայ թերթերը գործ են դրել կազմերի մէջ և ոչ ոք խնամք չի ունեցել անծանօթ ձեռագիրը պահելու: Յայտնի է նաև, որ հնում նոյն ձեռվ էին վարւում նոյն իսկ հայերէն եւ կարագիր ձեռագրերի հետ, երբ բոլորովին կիրառութեամբ գժուարըմբոնելի էր գարձել երկաթափերը:

Մենք մեր ձեռքի տակ ունէինք Մայր Աթոռի ձեռագրերի պահպանակների ցանկը, որի շնորհիւ յաջողուեց արագութեամբ պ Տուրաևին ցոյց տալու եթովպական ձեռագրերի հատուածները:

Վերոյիշեալ բրոշիւրը նուիրուած է այդ հատուածների ուսումնառութեան:

Յարդելի գիտնականը, նախքան իւր ընդօրինակած հատուածների քննութեան անցնելը, համառօտակի ի մի է հաւաքում իւր ունեցած տեղեկութիւնները հայերի և հարէշների յարարերութեանց մասին և տալիս է այսպիսի ցուցմունքներ, որ այդպէս ի մի հաւաքուած մինչև այժմ չունէինք և մի քանի բան էլ ամեննեին չգիտէինք, ուստի անշան չեմ համարում յօդուածի այդ մասը առաջ բերել քաղուածօրէն թարգմանելով:

Հայերն ու խպտիները իրեւ հակաքաղկեդոնականներ միշտ կրօնական կապ են ունեցել միմեանց հետ և Երուսաղէմում պահպանել են մշտական հաղորդակցութիւն: Խպտիների միջոցով այդ կապը անցել է նաև Հարէշստան, որովհետեւ այդ երկիրը ըստ կրօնականի ենթարկում է խպտաց պատրիարքին. իսկ Երուսաղէմի հարէշները ընդունում են Երուսաղէմի հայոց պատրիարքի զերիշանութիւնը: Տաճնմեկերորդ դարում հայերը Եգիպտոսում մեծ գաղութ են կազմում, օգտուելով Ալ-Մուստասիր խալիֆայի առաջին վեպիր հայազգի Բաղր-ալ Զամալի ազգեցութիւնից: Նոքա ունէին հայ պատրիարք, որ ազգեցիկ էր նաև արքունիքում: Արու Սալիխը<sup>1</sup>, ժի զարու հայազգի հեղինակը, նկարադրելով հայերի, խպտիների և յոյների եկեղեցիներն ու վանքերը, պատմում է որ հայերը սկսեցին հալածանքի ենթարկուել քրդերի Եգիպտոսի վրայ կատարուած յարձակման ժամանակ: Կարեոր են Արու Սալիխի տեղեկութիւնները յատկապէս Հարէշստանի մասին, քանի որ պակասում են տեղական կարեորութիւն ունեցող ազրիւրներ:

Հայերի և հարէշների յարաբերութեանց մասին աւելի կարեոր է այն աւանդութիւնը, ըստ որում Եւստափիոս հայ եպիսկոպոսը իւր աշակերտների հետ այցելել է նաև հարէշների աշխարհը: Հայ եկեղեցու ազգեցութիւնը հարէշականի վրայ կարելի է հաստատապէս ցոյց տալ հետեւալ տեղեկութեամբ:

Լեբնա-Դենգելի թագաւորութեան ժամանակ գրուած տարեգրքի մէջ, 1539 թ. մենք կարգում ենք: «Այս թուին հթովապական ժողովուրդը Զատկի օրուայ մասին տարբեր կարծիքի լինելով, ենթարկուեց բազմաթիւ նեղութիւնների: Ոմանք ասում էին, որ Զատիկը պէտք է տօնել Միազիայի 13-ին (Ապրիլի 13-ին), իսկ նոքա, որ քաջածանօթ էին Տիրոջ օրէնքին, թագաւորի հետ հաւատով համակարծիք էին և տօնեցին “հրէշական Զատիկը Միազի 10-ին, քրիստոնէական 11-ին (Ապրիլի 6-ին)»:

Զատկի տարբեր ժամանակուայ տօնը քաջայայտ է հայոց

1. Հրատարակութիւն եւ Թարգմանութիւն Էvetts Ժանօթութիւններով Batler-ի Anecdota Oxoniensis, Semitic series, p. VII. Oxford, 1895.

մէջ ծռազատիկ անունով. որ իւր ժամանակին այնքան յուղամունք և փոթորիկ է առաջ բերել հայերի և յոյների մէջ և թէկ սկզբում հայերը, նոցա հետ էլ ինչպէս երեսում է հարէշները, չեն համաձայնում յոյների և ընդհանուր քրիստոնեայ եկեղեցու հետ, աւելի ուղիղ և հին համարելով իրենց տոմարական հաշիւները, վերջում համակերպւում են միջից վերացնելով գայթակութեան քարը:

Տուրակը շարունակում է ուրիշ տեղեկութիւններ ևս թուել, որ ապացուցանում են հայերի աստուածաբանական գրականութեան ազգեցութիւնը հարէշների վրայ:

Այդպէս հայերէնից հարէշերէն են թարգմանուել—ա) Գրիգոր Լուսաւորչին վերագրած ձառ յաղագս Աստուածութեան Յիսուսի Քրիստոսի ընդգէմ հրէից, որ մտել է եթովպական կանոնների ժողովածուի մէջ:

բ. Առերբ Գրիգորի պատարագից մի հատուած, որ մտել է «Հաւաք հարց» ժողովածուի մէջ:

գ. Առերբ Գրիգորին վերագրուած այն աղօթքը, որ ժամագրքի վերջումն են գնում «ծննդեան և լուր օրերի» ժամասացութեան արտասանելու համար: Նա շատ համառօտ է:

դ. «Եւպրաքսիոսի հայոց արքեպիսկոպոսի», գաւանարանական գրութիւնից հատուածներ, որ գտնում է յիշեալ «Հաւաք հարց» ժողովածուի մէջ:

Այս բոլորը թարգմանուած են արաբերէնից, ԺԶ դարու վերջում: Աւելի հին է եթովպական Յայսմաւուրքի թարգմանութիւնը, որի մէջ Ս. Գրիգորի պատմութիւնը կարեւը տեղ է ըըսնում. նրա յիշատակը տօնւում է Մատկարամի 19 (սեպտ. 16-ին) և 3-ին. ամսի 29 տօնւում են Արսիմա և Ագարիա սրբերը, այն է սուրբ Հոփիսիմէն և Գայիանէն: Առերբ Գրիգոր Լուսաւորչիչը «ոչ արեամբ նահատակուած սուրբը» տօնւում է նաև Դաքսաս ամսի 15-ին (Դեկտ. 11), ինչպէս խալիների մօտ: Եթովպական գրականութեան մէջ Լուսաւորչի կենսագրութիւնը գտնուում է նաև «Մեծագործարիւնք մարտիքոսաց» ժողովածուի մէջ, որ ԺԴ գարի վերջից է կամ ֆե սկզբից և համառօտուած է «Ագարանգեղոսիք պատմութեան արաբական բնագրից»:

Brace գիտնականը գտնում է, որ եթովպական գրականութեան մէջ յայտնի արրա Գէորգը ծագումով հայ է. որ 1440 թ. ի պատիւ Աստուածամօր գրել է շարականներ, «փառաբանութիւնք կոյսի» անուամբ: Ամենատարածուած և սիրուն շարականներ են դոքա և այնքան մաքուր ոճով են գրուած, որ կասկած են յարուցել հեղինակի օտար ծագման մասին: Սակայն Զօտընսրեգուտուականի կարծիքով այդ նոյն Գէորգը եթովպակերէն թարգ-

մանել է նաև հայազգի Պետրոս Սատամանդացու Աւետարանի չարչարանաց գլուխների մեկնութիւնը։ Յիշեալ Լեռնա-Դենդալ թագաւորի մօտ ծառայում էր Մատթէոս անունով մի հայ, որին նա 1513 թ. Պորտուգալիայի էմիմանուէլ թագաւորի մօտ գեապան ուղարկեց և սա առաջին պաշտօնական դեսպանն էր Հարէշտանից Եւրոպա ուղարկուած։ Մատթէոսից յետոյ, աւելի ուշ, Եւրոպա է գալիս մի բնիկ հարէշ և կարծիք է յայտնում իւր նախորդի մասին թէ նրա, իրքի ոչ բնիկի, հաղորդած տեղեկութիւնները Հարէշտանի մասին սիսալ են։ Այդ բնիկ հարէշը, Յագա-Զարան գրում է. „Matthaeus, quoniam Armenieus erat, non poterat res nostras perspicue scire, praesertim eas, quae ad fides spectabant. Idecirco multa ceram rege Emanuele exposuit, quae minime apud nos habentur. Id autem fecit, non quod mentiri volueret quippe vir bonus erat, sed quod in rebus religionis nostrae non admodum erat edocitus“—Մատթէոսը, որովհետեւ հայ էր, չէր կարող մեր գործերը ճշտութեամբ իմանալ, մանաւանդ հաւատի վերաբերեալ խնդիրները։ Այդ պատճառով նա շատ բան է հաղորդել էմմանուէլ թագաւորին, որ մեզ մօտ ամենեին գոյութիւն չունին։ Սակայն նա այդ չի արել որպէս զի խարած լինի, որովհետեւ առարինի մարդ էր, այլ որովհետեւ մեր կրօնական խնդիրներին դեռ հմտւած չէր։

**Ժ 9—Ժէ** դարերում, երբ եզրուիտները փորձում են մուտք գործել Հարէշտան, հայի տարազ էին հագնում, որովհետեւ հայերը ամենուրեք ազատ մուտք ունեին այդ երկրի մէջ և նոցա թիւը բաւական մէծ էր։ Եզրուիտները այդտեղ ուղարկում էին նաև հայազգի կաթոլիկներ։

Ժէ դարում «Թրանկներին» Հարէշտանից աքսորում են, իսկ հայերը շարունակում են պահպանել իրենց արտօնեալ վիճակը. մինչև անգամ մի հայ եպիսկոպոս մէծ ազդեցութիւն է ձեռք բերում թագաւորի վրայ և պարիզարնակ հայազգի մի վաճառականի ուղղած գրութեան մէջ հաղորդում է, որ հարէշների Յովհաննէս թագաւորը, զգուած խպտիների պատըիարքի կողմից կարգուած մետրապոլիտաների տղիտութիւնից, մտադիր է այդ պաշտօններին կոչել հայ եպիսկոպոսներ։ Թագաւորի մօտ ծառայում էին հայեր, դոցանից մէկը վասոդ էր պատրաստում։

Աւելի նոր է և շատերին ծանօթ այն առաքելութիւնը, որ 1867—68 թ. ձեռնարկեցին Խոանակ եպիսկոպոսը և Տիմէթէոս վարդապետը անգղիական կառավարութեան յանձնարարութեամբ։ Դոքա պէտք է միջնորդէին և ազատէին անգղիացի գերիներին, որոնց կալանաւորել էին հարէշները։ Սոքա նկարագրել են իրենց կատարած ձանապարհորդութիւնը և պատմում են, որ հարէշ իշ-

խողները մտագիր էին սոցա պահել իրենց մօտ, փոխանակ խըպտական տգէտ մետրապօլիտների:

Ամենահին ժամանակներից պահուած այդքան, թէև հատուկոր, տեղեկութիւնները հաստատում են, որ Հայերը Հարէշստանում միշտ ունեցել թէ կրօնական գործունէութեամբ և թէ առօրհայ գործերի մէջ: Այդ հետքերը նկատելի են և դրականութեան մէջ: օրինակ Բրիտանական թանգարանի Orient. 743 ձեռագրում գտնում ենք հայերէն թուական անունները եթովպերէն զրութեամբ, իսկ նոյն թանգարանի մի ուրիշ ձեռագրում Dill. 72 հայերէն բառեր եթովպերէն բացատրուած:

Պ. Տուրակը այսպիսի մի միտք էլ է յայտնում, թէ քանի որ հարէշները պահպանել են փոխադարձ յարաբերութեանց մասին այդքան տեղեկութիւններ, «բնական է ենթադրել, որ միւս կողմը ևս (այսինքն հայերը) պէտք է որ ունենան համանման նիւթեր, այն ևս մեծ քանակութեամբ, ի նկատի առած սոցա քաղաքակրթական և դրականական անհամեմատ աւելի բարեյածող պայմանները»: Նա յոյս ունի, որ հայ մասնագէտները ժամանակ կը գտնեն առաջադրած հարցի վերաբերեալ նիւթերը համախմբել: Այդ ակնարկած նիւթերը ամենից առաջ կարող են հանդիպել Կիլիկիան և Երուսաղէմի հայութեան գրական-պատմական գործերում և առաջ այլուր, որովհետեւ այդանորդի հայերն են գլխաւորապէս սերտ կապ պահպանել խպտիների և հարէշների հետ:

Ինչպէս վերև յիշեցինք, մենք պ. Տուրակին տուինք մազաղաթեայ պահպանակների ամրողական ցուցակը. չորս ձեռագրի մէջ յատկապէս խպտական պահպանակներ: Նշանակալից է մի հանգամանք, որ բոլոր 4 ձեռագրերը ԺԴ—ԺԵ դարուց են, որ պատահական լինել չեն կարող:

Այդ ձեռագրերն են. №№ 807, 919, 2369 և գեռ ևս համարի տակ չմտած մի ձեռագիր:

ա) Հատուած ս. Կիւրեղ Աղէքսանդրացու գործերից.

բ) Հատուած Սաղմոսի.

գ) Հատուած Կիւրեղի՝ «Յաղակս Մելքիսեդէկի» քարոզից առնուած:

գ) Հատուած Յայտնութեան Յովհաննու:

ե. Հատուած ճառի—յաղակս Մեծի պահոց:

Եթովպական գրականութեան համար պահպանակների գիւտը ԺԴ—ԺԵ դարու ձեռագրերում մեծ կարեռութիւն ունեն նաև այն պատճառով, որ Երուսաղական գրատարաններում ԺԸ դարուց առաջ եթովպական ձեռագրեր չկան պահուած:

Քրոշիւրի վերջում տրուած են Գրիգոր Լուսաւորչի վերոյիշեալ աղօթքը, եթովպերէն բնագրով և սլաւոներէն թարգմա-

նութեամբ, նաև կուսաւորչի պատարագի հատուածը, միայն սլաւոնիերէն թարգմանութեամբ առանց բնագրի:

Մի ուրիշ առթի ենք թողնում այդ աղօթքի և պատարագի հատուածի հայերէն թարգմանութիւնը:

Յիշողութեան վրայ հիմնուած անկարող էինք մտարերել կուսաւորչին վերագրած աղօթքներից մէկն ու մէկը, որ յաճախ հանդիպում ենք ձեռագրերում, եթովպականի բնագիրը համարել անհրաժեշտ է յատուկ ուսումնասիրութիւն:

### 5 Մայիսի\*

Մեսոպ եպիսկոպոս.

**Х. И. Кучукъ. Іоаннесовъ.** Старинныя армянскія рукописи и армянскія надписи, находящіяся въ предѣлахъ Россіи—  
Խ. Յ. Քուչուկ Յովհաննիսեան, Հայերէն նին  
ձեռագրեր եւ որդանագրութիւններ, որ գտնում են Ռու-  
սաստանի սահմաններում, Մոսկվա, 1912. արտատպուած  
Древностей Восточныхъ, հ. Դ, հատ. I. Էջ 45. 29 լու-  
սատիպ նկարներով:

Աշխատութեան վերջում կայ նորերս վախճանուած պր.  
Դ. Խալաթեանի մահացուցակը, համառօտ կենսագրութեամբ և  
գրական աշխատութիւնների ցանկով:

Պ. Ք. Յովհաննիսեանը բաւական ծառայութիւն ունի մա-  
տուցած յատկապէս հարաւային Ռուսաստանի հայերէն արձանա-  
գրութիւնների և մասամբ նաև ձեռագրերի ուսումնասիրութեամբ։  
Մոսկվայի հնագիտական ընկերութեան, որի անդամն է ինքը, պար-  
բերական աշխատութիւնների մէջ նա շարունակ տուել է այդ  
նիւթերի ուսումնասիրութիւնը և հայկական երրեմն ծաղկեալ և  
այժմ անհետացած այդ զաղթավայրի պատմութիւնը զրող անձը  
ապագայում երախտագիտութեամբ կյիշի պ. Յովհաննիսեանի  
անունը։ Նա շատ բան է կրօսակց աղատել։

Յովհաննիսեանի յօդուածում նկարագրուած են.

ա) Երկու թերթ մագաղաթեայ պահպանակ, Ժ—ԺԱ. դարու  
երկաթագիր, Մուրը գրքի Ծննդոց Բ գլ. 5. Գ. գլ. 1 տունը։